ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՅՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Թաղման յուրաքանչյուր ծիսակատարության ժամանակ օգտագործվել են բազմազան առարկաներ՝ սկսած մաքրագործման նպատակով դամբարանում դրված գլաքարերից մինչև պահպանական դեր կատարող հմայիլները: Թաղման գույքը բաղկացած էր ծեսի համակարգում կատարված զոհաբերություններին առնչվող արտեֆակտերից, հանգուցյալի անձնական իրերից, ննջեցյալին մատուցված ընծաներից և ծիսական այլ առարկաներից: Այդ իրերն այնքան շատ են, որ միայն խոշոր դասերը հաշվվում են տասնյակներով (փոխադրամիջոցներ, աճյունի զետեղարաններ, ծիսական առարկաներ, իշխանության խորհրդանիշներ, աշխատանքի գործիքներ, զենք ու զրահ, կենցաղային իրեր, սպասք, զարդեր և այլն): Իսկ յուրաքանչյուր դասի ներսում հնագիտական նյութն ըստ գործառնական նշանակության կամ, ինչպես ընդունված է ասել, ըստ կարգերի խմբավորելիս (սայլեր ու կառքեր, դիամահիճներ ու տապաստներ, ձիթաճրագներ ու խնկանոթներ, գավազաններ ու ճակատակալներ, իլիկներ ու մանգաղներ, դաշույններ ու լանջապանակներ, պատվանդաններ ու արկղիկներ, սափորներ ու գավեր, ուլունքներ ու շքասեղներ) նախկին թիվն ընդունում է բազմապատիկ չափեր: Ասվածից արդեն կարելի է եզրահանգում կատարել դամբարաններում հայտնաբերված հնագիտական առարկաների տեսակների մոտավոր քանակի վերաբերյալ: Գտածոների բազմաձևության և մեծաքանակության նման պայմաններում գործնականում անհնար է փոքր ծավալի ուսումնասիրության շրջանակներում ներառել ու արժեքավորել թաղման գույքի ողջ տեսականին: Ուստի, ստորև կփորձենք քննել դամբանային իրերին առնչվող և հուղարկավորման առանձին արարողակարգերի հավաստմանն ու պարզաբանմանը նպաստող միայն մի քանի հարցեր: Դրանք են՝ առարկաների որոշակի համախմբության համահարաբերակցումը ննջեցյալների սեռին և տարիքին, դամբարան դրվելուց առաջ գույքի լրացուցիչ փոփոխությունը, մասնավորապես՝ իրերի ջարդումը, որոշ իրերի դասավորվածությունը ննջեցյալի կամ զոհի աճյունի նկատմամբ և այլն:

Թաղման գույքը և ննջեցյալների սեռատարիքային աստիճանակարգումը

Նման փոխկախվածության գոյությունը վաղուց է հայտնի հնագետներին [1]: Ըստ Տ. Ս. Խաչատրյանի՝ Արթիկի դամբարանադաշտում տղամարդկանց թա-

[1] М. Г. Г у с а к о в. Погребальный инвентарь и половозрастные характеристики погребенных.– Всесоюзная археологическая конференция «Достижения советской археологии в XI пятилетке». Тезисы докладов. Баку, 1985, с. 123–125.

դումները սովորաբար ուղեկցվել են զենքերով և աշխատանքի գործիքներով, իսկ կանանց թաղումներին առավել բնորոշ է խեցանոթների ու զարդերի առկայությունը[2]: Ա. Ա. Իվանովսկու դիտարկումներով՝ Արցախի մի շարք դամբարանադաշտերում ոտքի ապարանջանները հանդիպում են միայն կանանց դամբարաններում[3]: Մարդաբանական բնորոշումների խիստ սակավաթվությունը, ցավոք, մեզ հնարավորություն չի տալիս մանրամասն վերլուծել ուշբրոնզեդարյան դամբարաններում սեռատարիքային տարբեր խմբերի և թաղման գույքի համահարաբերակցության խնդիրը, որն իր հերթին կնպաստեր հասարակության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրությանը: Թվում է, թե մարդաբանական բնորոշումների անլիարժեքության պայմաններում ուղեկցող գույքը կարող է օգնել առանձնացնելու տարբեր սեռի ու տարիքի անձնավորությունների թաղումները: Սակայն հետադարձ այս խնդրի լուծման բարդությունն այն է, որ մեկ դամբարանադաշտում կատարված դիտարկումների արդյունքների մեխանիկական տեղափոխությունը մեկ այլ դամբանադաշտի նկատմամբ կարող է հանգեցնել սխալների, եթե նույնիսկ երկու հուշարձանն էլ պատկանում են միևնույն հնագիտական մշակույթին[4]: Այնուհանդերձ, սխալ չի լինի ենթադրել, որ զենք ու զրահով և իշխանություն խորհրդանշող առարկաներով ուղեկցվել են տղամարդկանց թաղումները [5], իսկ կանանց ու երեխաների դամբարաններում զետեղվել են այլ իրերի ստանդարտ հավաքածուներ [6]: Տղամարդկանց ու կանանց թաղումներն ուղեկցող գույքի տարբերությունները, իրենց հիմքում, պայմանավորված են նրանց գործունեության ոլորտների տարաբաժանմամբ:

Սակայն ոչ միայն գույքի որոշակի համալիրները, այլև երբեմն եզակի իրերը կարող են օգնել հանգուցյալի սեռը բնորոշելուն: Բերենք միայն մեկ օրինակ: Հին պատկերացումներով, իլիկը սերտորեն առնչվում էր այնկողմնային աշխարհին: Այն իր կայուն տեղն է գտել դամբանային գույքի կազմում և համարվել է մահվան խորհրդանիշ[7]: Ենթադրյալի անձնական իրերի թվում իլիկի առկայությունը միարժեքորեն կարող է հուշել, որ նա կին է: Խեթական տեքստերից մեկում իլիկը ներկայացված է որպես կանացիության բնութագրիչ [8]: Հոմերոսյան պոեմներում ներկայացված են ինչպես իլիկ մանող տիրուհիներ, այնպես էլ նաժիշտներ և ստրկուհիներ [9]: Իլիկից անբաժան են կարելա-ֆիննական էպոսի իգական կեր-

---

[2] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 141.

[3] А. А. И в а н о в с к и й. По Закавказью.– Материалы по археологии Кавказа, вып. VI. М., 1911, с. 168.

[4] В. А. А л е к ш и н. Социальная структура и погребальный обряд древнеземледельческих обществ. Л., 1986, с. 9.

[5] *Սուրը, օրինակ, ոչ միայն զենք էր, այլև տղամարդու խորհրդանիշ* (*տե՛ս* М. Э л и а д е. Космос и история. М., 1987, 236):

[6] *Կանանց թաղումներին բնորոշ են իլիկները, ձձումները, ուլունքների առատությունը, երեխաների դամբարաններում դրված են սակավաթիվ խեցանոթներ, մասամբ՝ փոքր չափերի:*

[7] Т. Н. С в е ш н и к о в а. Волк в контексте румынского погребального обряда.– Исследования в области балто-славянской духовной культуры (далее–ИОДК). Погребальный обряд. М., 1990, с. 131.

[8] O. R. G u r n e y. Die Hethiter. Dresden, 1969, S. 171–172.

[9] *Հ ո մ է ր ո ս. Իլիական, Երևան, 1955 VI, ն ո ւ յ ն ի՝ Ոդիսական, Երևան, 1988, I, IV, VI-VII:*

պարները[10]: Հայկական դյուցազներգությունից ևս մեզ են հասել իլիկ մանող տիրուհիների և գեղջկուհիների կենդանի կերպարներ[11]:

Թաղման գույքի հարմարեցումը ծեսին

Հնագիտական գրականության մեջ վաղուց արտահայտված է այն տեսակետը, որ դամբարանում գետեղված իրերը, սովորաբար, չեն պատրաստվել հատուկ թաղման նպատակներով[12]: Այդ եզրահանգումն արվել է գտածոների մաշվածության, դրանց վրա եղած երկարատև օգտագործման հետքերի և տրամաբանական այլ հետևությունների հիման վրա: Հիշյալ տեսակետի օգտին է խոսում նաև դամբանային իրերի մեծամասնության «նմանակների» հայտնաբերումը նույն մշակույթին պատկանող բնակատեղիներում: Միաժամանակ ընդգծվել է բազմաթիվ իրերի ծիսական նշանակությունը, որից, իհարկե, չի հետևում, որ դրանք պատրաստվել են հատկապես դամբարան դրվելու նպատակով: Հիշյալ եզրակացությանը հանգելը սխալ կլինի նույնիսկ այն դեպքում, եթե հաջողվի պարզել, որ այդ իրերը նախկինում կենցաղային գործածության մեջ չեն եղել: Մինչդեռ նման եզրահանգումներ նույնպես արվել են: Դեռևս անցյալ դարասկզբին կարծիք է հայտնվել, որ ներկերով լրահարդարված անոթները նախատեսված են եղել միայն թաղման համար[13]: Հ. Հ. Մնացականյանը նույնպես գտնում է, որ ներկերով «ընդելուզված» լճաշենյան խեցանոթները պատրաստվել են հատկապես թաղման ծեսի նպատակներով[14]: Ենթադրություն է արվել, որ Քանագեղի ուշբրոնզեդարյան № 1 դամբանաթմբում հայտնաբերված խեցեղենի որոշ մասը պատրաստվել է հատուկ թաղման համար[15]: Մեր կարծիքով՝ առավել իրական հիմքեր կան խոսելու գույքը թաղման ծեսի պահանջներին համապատասխանեցնելու մասին, որի համար հնարավորություն է ընձեռում «դամբանային» անոթների հարդարման խնդրի ուսումնասիրությունը:

ա) Իրերի լրացուցիչ հարդարումը: *Ավելի քան մեկ դար է, ինչ հնագետների տեսադաշտում են այն խեցանոթները, որոնց փորագիր զարդապատկերները լցված են մածկաներկերով կամ անոթի մակերևույթի վրա թրծումից հետո ներկերով նկարված են կեռխաչեր, ալիքազարդեր, ոլորանախշեր և այլ խորհրդանշաններ (աղ., 2): Հատկապես վերջին տասնամյակների հետազոտությունները ցույց տվեցին, որ հիշյալ եղանակով «ընդելուզված» կամ զարդաբանված անոթները Հայաստանում հանդիպում են արդեն միջին բրոնզից ուշ բրոնզի դարաշր-*

---

[10] *Կալեվալա. կարելա-ֆիննական էպոս, Երևան, 1972, Ա, Ը, Թ:*

[11] *Սասնա ծռեր, ժողովրդական վեպ, աշխատությամբ՝ Ս. Հարությունյանի, Երևան, 1977, էջ 288, 341:*

[12] А. А. И в а н о в с к и й. *Նշվ. աշխ., էջ 99,* Б. Б. П и о т р о в с к и й. Археология Закавказья. Л., 1949, с. 89; В. М. М а с с о н. Первые цивилизации. Л., 1989, с. 104.

[13] А. А. И в а н о в с к и й. *Նշվ. աշխ., էջ 127:*

[14] *Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները.– ՊԲՀ, 1965, № 2, էջ 105-108:*

[15] *Գ. Ե. Ա ր ե շ յ ա ն. Պահպանական պեղումներ Քանագեղի դամբարանադաշտում.– Հայկական ՍՍՀ-ում 1979–1981 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԴՀԱԱ), Երևան, 1980, էջ 3:*

ջանին անցման փուլի դամբաններում՝ Հառիճի № 85[16], Դիլիջանի (Աղստևի գետափնյա)[17], Շիրակավանի № 42 (10)[18] և լայն տարածում են ստանում ուշ բրոնզի ու վաղ երկաթի դարաշրջաններում: Վաղուց արդեն հանրահայտ է սպիտակ և կարմիր ներկերով «ընդելուզված» լճաշենյան «եռագույն» խեցեղենը[19]: Ուշբրոնզեդարյան նման խեցանոթներ են հայտնաբերվել Քարաշամբի № 46, 60, 117, Շամիրամի (մեծ դամբանաբլուրներ) № 2, 5, Մեծամորի № 58, 88, Լոռի բերդի № 2, 7, Երևանի, Գեղարոտի, Նորատուսի դամբարաններում: Մածուկային ներկերով լրահարդարված և զարդաբանված խեցանոթներ են հայտնի Կարմիր բլուրի, Բազմաղբյուրի, Նազրվանի, Մեղրաձորի, Լոռի բերդի վաղերկաթեդարյան դամբարաններից: XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ա. Իվանովսկու, Է. Ռյոսլերի և այլոց պեղումներով Արցախում հայտնաբերված որոշ խեցանոթների փորագիր զարդապատկերները լցված են եղել սպիտակ «զանգվածով» (աղ., 3)[20]: Հիշյալ եղանակով զարդաբանված խեցանոթներ են գտնվել Վրաստանի դամբանային համալիրներում (Զեմո Բոդբե, Նասադգոմարի, Փեվրեբի)[21]:

Գ. Չայլդի կարծիքով, սպիտակ մածուկով «ընդելուզումը» կատարվում էր խեցանոթի զարդապատկերն առավել հստակ դարձնելու նպատակով[22]: Լ. Վուլլին ենթադրում է, որ զարդաբանման հիշյալ եղանակը փոխառված է մետաղագործ վարպետներից, և Ալալախի մածկաներկով լցված փորագրազարդերով խեցանոթները ձևով ևս հիշեցնում են մետաղյա անոթները[23]: Հետաքրքիր է, որ հիշյալ զարդաբանվածքով և իրանի կտրուկ անցումներով խեցանոթները Հայաստանում ևս, հավանաբար, ընդօրինակված են մետաղյա անոթներից: Որոշ հետա-

---

[16] Т. С. Х а ч а т р я н. *Նշվ. աշխ., էջ 120, նկ. 74:*

[17] *Ս. Ա. Ե ս ա յ ա ն, Հ. Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, Երևան, 1969, էջ 26-27, 43, աղ. XVII, 1:*

[18] Г. Е. А р е ш я н, В. Э. О г а н е с я н, Ф. М. М у р а д я н, П. С. А в е т и с я н, Л. А. П е т р о с я н (далее – Г. Е. А р е ш я н и др.). Конец среднего бронзового века в междуречье Аракса и Куры.– ИФЖ, 1990, № 1, с. 63–64, таб. IV, 6, 8, 9; *Ռ. Ս. Թ ո ր ո ս յ ա ն, Օ. Ս. Խ ն կ ի կ յ ա ն, Լ. Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Հին Շիրակավան, Երևան, 2002, էջ 26-27, աղ. X, 4-6, 9:*

[19] А. О. М н а ц а к а н я н. О двухцветной керамике Лчашена.– Известия общественных наук НАН АрмССР, 1957, 1 5, с. 107–116.

[20] А. А. И в а н о в с к и й. *Նշվ. աշխ., էջ 126-129:* Отчеты Императорской Археологической комисси (далее–ОИАК) за 1899 год. СПб., 1902, с. 57–90. ОИАК за 1903 год. СПб., 1906, с. 87.

[21] К. Н. П и ц х е л а у р и. Восточная Грузия в конце бронзового века. Тбилиси, 1979, с. 40, 69–70.

[22] Г. Ч а й л д. Древнейший Восток в свете новых раскопок. М., 1956, с. 70.

[23] Л. В у л л и. Забытое царство. М., 1986, с. 87.



1



2



3

Աղյուսակ

զոտոդներ չեն բացառում, որ ներկապատ փորագրազարդերով խեցանոթները կարող են ժամանակագրորեն նախորդել մածուկային ներկերով պատկերազարդվածներին[24]*:*

Խեցանոթների մակերևույթին մածուկային ներկերով նկարված պատկերների վատ պահպանվածության հիման վրա Կ. Փիցխելաուրին իրավացիորեն եզրակացնում է, որ դրանք կատարվել են կավանոթները թրծելուց հետո[25]*: Այդ է վկայում նաև այն հանգամանքը, որ մածկային ներկը հաճախ ծածկում է փայլեցման եղանակով կատարված զարդապատկերները՝ անհամաչափություն առաջացնելով և չկապակցվելով նախնական պատկերագրությանը: Հարցի առնչությամբ նույն եզրահանգմանն են եկել նաև այլ ուսումնասիրողներ, որոնց կարծիքով խնդրո առարկա խեցեղենը հայտնի է միայն դամբարաններից և հարմարեցված է թաղման ծեսի նպատակներին*[26]*: Այս տեսակետը բավարար չափով հիմնավորված է թվում և մեզ թույլ է տալիս երկու կարևոր հետևություն անել:*

Առաջին հետևությունն ակնհայտորեն բխում է վերն ասվածից: Ներկապատ փորագրազարդերով և թրծումից հետո մածուկային ներկերով պատկերազարդված խեցանոթները չեն պատրաստվել հատուկ դամբարան դրվելու նպատակով: Հակառակ դեպքում, տրամաբանական կլիներ ներկը դրանց վրա քսել թրծելուց առաջ: Երկրորդ հետևությունը վերաբերում է ծեսի իմաստային մեկնաբանմանը: Թաղման արարողակարգը իրավացիորեն դասվում է մարդու կյանքի բեկումնային պահերին կատարվող ծեսերի թվին: Հայտնի է, որ այն հասարակություններում, որտեղ ծիսական նպատակներով ընդհանրապես օգտագործվում են կյանքի ու մահվան խորհրդանիշներ հանդիսացող կարմիր, սպիտակ և սև գույները, բեկումնային (ճգնաժամային) իրադրությունը, երբ այս երեք գույները համատեղ են հանդես գալիս, նվիրագործումն (ինիցիացիան) է[27]*: Մյուս կողմից՝ նվիրագործման բոլոր արարողությունները նպատակ ունեն վերացնել տարբեր մակարդակների միջև եղած խզումը և հնարավոր դարձնել անցումը դեպի այնկողմնային աշխարհ: Այլ խոսքով. հուղարկավորման և նվիրագործման առասպելաբանությունը երբեմն համընկնում են*[28]*: Ուստի, դամբանային համալիրներում «եռագույն» խեցեղենի հանդես գալը կարող է հուշել, որ տվյալ ժամանակաշրջանում բնակչության որոշակի խմբի մոտ թաղման ծեսը դիտվել է որպես նվիրագործում*[29]*:*

---

[24] *Վ. Հովհաննիսյան, Ֆ. Մուրադյան. Քարաշամբի դամբարանադաշտի № 117 դամբարանը.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, 4, № էջ 94:* Г. Е. Арешян и др. *Նշվ. աշխ., էջ 58:*

[25] К. Н. Пицхелаури. *Նշվ. աշխ., էջ 40:*

[26] *Վ. Հովհաննիսյան, Ֆ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 95:*

[27] В. Тэрнер. Символ и ритуал. М., 1983, с. 100; Ю. Липс. Происхождение вещей. М., 1954, с. 267–269, 394; Э. Церен. Библейские холмы. М., 1966, с. 185. *Հնդկական գունային խորհրդանիշների համակարգում սպիտակ և կարմիր գույների համակցությունը սգո նշան է* (Махабхарата, вып. VII, ч. 2. Ашхабад, 1981, с. 262)*:*

[28] М. Элиаде. *Նշվ. աշխ., էջ 188-189:*

[29] *Ազգագրագետները, անցման ծեսերը նկարագրելիս, սովորաբար դրանք համեմատում են նվիրագործման հետ: Վերջինս՝ իր եռամասնությամբ, համադրելի է նաև թաղման ծեսին. ա) ննջեցյալի անջատումը ողջերից, բ) ճանապարհ, գ) նոր կյանք (*А. К. Байбурин, Г. А.

Կան նաև այլ փաստեր, որոնք վկայում են դամբարան դրվելուց առաջ մի շարք անոթների լրացուցիչ հարդարման մասին: Այսպես, Արուճի (Շամիրամ 2) դամբանադաշտի № 5 դամբարանի թաղման սրահում հայտնաբերված փոքր կարասի իրանի ստորին մասում, նստուկին կից 1 սմ տրամագծով անցք է արված, իսկ կարճավիզ կավանոթ ուսերին կրում է կետազարդ բեկյալ գծեր՝ օձի և, հավանաբար, շան ոճավորված պատկերներ (աղ., 1): Երկու դեպքում էլ լրահարդարումը կատարվել է խեցանոթները թրծելուց հետո[30], մինչդեռ առավել նպատակահարմար կլիներ նույնը կատարել նախքան թրծումը՝ թաց կավի վրա: Հետևաբար, այս երկու խեցանոթներն էլ չեն պատրաստվել հատկապես հուղարկավորության համար և, ամենայն հավանականությամբ, մինչ թաղումը գործածվել են: Հուղարկավորությունից առաջ դրանց վրա լրացուցիչ շտկումներ են կատարվել, անոթները հարմարեցվել են թաղման ծեսի պահանջներին[31]: Տեղին է նաև հիշել, որ Վանի թագավորության ժամանակաշրջանում նույնպես որպես աճյունասափոր օգտագործված կավանոթների ուսերին անցքեր են արվել թրծելուց հետո, հավանաբար, թաղումից անմիջապես առաջ[32]:

բ) Իրերի ջարդումը: *Ուշբրոնզեդարյան դամբարաններում հաճախ կարելի է հանդիպել ջարդված իրերի, որոնց բեկորները երբեմն գտնվում են իրարից որոշակի հեռավորության վրա՝ դամբանասրահում, դամբանաթմբում կամ կրոլեխին կից տարածքում: Այսպես՝ Աշտարակի Խոջաբաղերի № 3 և № 6 դամբարաններում խեցանոթների բեկորները սփռված էին թաղման խցերի հատակների ողջ մակերեսով, ըստ որում՝ № 3 դամբանում առկա խեցատների մի մասը միտումնավոր մանրացված-փշրված էր: Կրոմլեխի հարավային եզրագծին կից հիմնաժայռը, հավանաբար, օգտագործվել էր որպես զոհարան, քանի որ հենց այդ հատվածում էին դիտավորյալ փշրվել որոշ խեցանոթներ, որոնց բեկորներն այնուհետև տեղադրվել էին դամբանախցում, իսկ մանր փշրանքները թողնվել էին տեղում: -2 դամբանաթմբի թաղման խցում զետեղված սափորը նույնպես ջարդված էր, իսկ կտորները գտնվում էին հատակի վրա, իրարից զգալիորեն հեռու: Սույն փաստը վկայում է, որ անոթը ջարդվել է մինչ այն պահը, երբ դամբանախուցը սկսել է լցվել հողով և քարով: № 2 և № 6 դամբարաններում որոշ կավանոթների մի քանի բեկորներ դամբանախցերում էին, իսկ մյուս խեցատները գտնվում էին դրանցից դուրս՝ բուն դամբանաթմբերում: Արուճի (Շամիրամ 2) դամբանադաշտի № 5 դամբարանում ննջեցյալի գլխի կողմում զետեղված էր*

Л е в и н т о н. Похороны и свадьба.– ИОДК, с. 68–69*): Ինիցիացիան դիտարկվում է որպես խորհրդանշական մահ և հարություն: Ամեն դեպքում՝ թե՛ նվիրագործումը, թե՛ թաղման ծեսը միևնույն տոնածիսական համալիրի բաղադրամասերն են*

(Л. А. А б р а м я н. Первобытный праздник и мифология. Ереван, 1983, с. 50, 64–65, 98*):*

[30] *Այդ իսկ պատճառով զարդաբանվածքն անհրաժեշտ որակը չունի:*

[31] *Անոթների լրացուցիչ հարդարումը պայմանավորված էր անդրաշխարհի մասին ավանդական պատկերացումներով: Հարցի առնչությամբ տե՛ս Գ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան № 5 դամբարանը (թաղման ծեսը մեկնաբանելու փորձ).– ՊԲՀ, 2005, -3, էջ 169–171:*

[32] Б. А. К у ф т и н. Урартский «колумбарий» у подошвы Арарата и куро-араксский энеолит.– Вестник Гос. музея Грузии, XIII в. Тбилиси, 1944, с. 70; *Հ. Ա. Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, Ռ. Մ. Թ ո ր ո ս յ ա ն. Արգիշթիխինիլիի սարկոֆագը.– ՊԲՀ, 1986, № 3, էջ 224:*

կոտրված, բայց ամբողջացող մի ինքնատիպ սափոր, որի բեկորներից երկուսը դրված էին ոտքերի մոտ՝ դամբանասրահի հատակին: Հետևաբար, սափորը ջարդվել էր որոշակի դիտավորությամբ, նախքան ջրաբերուկների դամբանասրահ թափանցելը: Վերին նավեր դամբարանադաշտի №37 դամբանաբլուրի կրոմլեխից դեպի հյուսիս տեղադրված տուֆե մեծ սալաքարի տակ հայտնաբերվեցին ջարդված խեցանոթների բազմաթիվ բեկորներ: Երբեմն, կոտրված կավանոթի բեկորները դրվել են հանգուցյալի գլխի տակ (Ռուսթեփեսի, դամբ. №1): Դամբանային գույքը ջարդելու արարողության վկայություններ են հանդիպում Հայաստանի գրեթե բոլոր դամբանադաշտերում: Թռեղքի դամբարաններում (Բեշտաշեն, դամբ. №11 և №13) ոչ միայն միտումնավոր փշրված անոթներ են հայտնաբերվել, այլև՝ դիտավորյալ կոտրված զենքեր[33]:

Իրերը կոտրելու արարողությունը բնորոշ է տարբեր եղանակներով կատարված թաղումներին: Այն թե՛ տարածական, թե՛ ժամանակային առումով ունի լայն ընդգրկում: Այսպես՝ Նախճավանի Մոխրաբլուրի պղնձեքարեդարյան №35 դամբարանում չափահաս ննջեցյալի ձեռքի վրա դրված է եղել խեցանոթի նստուկը, մեկ այլ խեցատ դրված է եղել գանգի մոտ, իսկ ոտքերի մոտ գտնվել է երկու կտորի բաժանված հեմատիտե գուրզ: Կավանոթների բեկորներ են գետեղված եղել №3 դամբարանում, իսկ №1, 25, 40 դամբարաններում դրանք տեղադրված են եղել ննջեցյալի գլխի տակ[34]: Սյունիքի մարզի Շիկահող գյուղի պղնձեքարեդարյան դամբանում գետեղվել են նախապես կոտրված կավանոթների բեկորներ[35]: Խեցանոթների խիստ մանրացված բեկորներ են հայտնաբերվել Տանձավերի վաղբրոնզեդարյան թաղումում[36], Շիրակի մարզի Քեթիի -20 միջինբրոնզեդարյան դամբարանում[37]: Սակայն չպետք է ստեղծվի այն տպավորությունը, թե քննարկվող երևույթը թաղման ծեսի «մենաշնորհն» էր: Նվիրաբերվող իրերը կոտրելու սովորությունը տարածված էր հին աշխարհում և, իհարկե, կիրառվում էր նաև այլ ծեսերի ընթացքում[38]:

Ենթադրվում է, որ ջարդված խեցանոթները վկայություններ են դրանցով կատարված հեղումների և հոգեհացի արարողության վերաբերյալ[39]: Որոշ ուսումնասիրողների կարծիքով, իրերը կոտրել՝ նշանակում է դրանց մատնել ծիսական մահվան[40]: Այն, ըստ երևույթին, առնչվում էր ննջեցյալների վերածննդի պատկե-

---

[33] Б. А. К у ф т и н. Археологические раскопки в Триалети, I. Тбилиси, 1941, с. 66, 315, таб. XL; с. 317, таб. XLI.

[34] О. А. А б и б у л л а е в. Энеолит и бронза на территории Нахичеванской АССР. Баку, 1982, с. 46–50.

[35] *Օ. Ս. Խ ն կ ի կ յ ա ն. Սյունիքի մ. թ. ա. IV-I հազարամյակի թաղման ծեսի մեկնության փորձ.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, №3, էջ 126:*

[36] *Նույն տեղում, էջ 128:*

[37] Л. А. П е т р о с я н. Раскопки памятников Кети и Воскеаска. Ереван, 1989, с. 47.

[38] Л. В у л л и. *Նշվ. աշխ., էջ 83:*

[39] С. А. Е с а я н. Древняя культура племен северо-восточной Армении. Ереван, 1976, с. 230; С. А. Е с а я н, А. А. К а л а н т а р я н. Ошакан I. Ереван, 1988, с. 91.

[40] Г. Ч а й л д. *Նշվ. աշխ., էջ 122:* Л. И. А к и м о в а. Об отношении геометрического стиля к обряду кремации.– ИОДК, с. 236.

բացումներին[41]*: Քննարկվող երևույթը կապվել է նաև վախի հետ, որ տածում էին ողջերը ննջեցյալների և նրանց անձնական գույքի վնասաբեր ազդեցության հանդեպ*[42]*: Մենք համամիտ ենք այն հեղինակների հետ, ովքեր թաղման ծեսում գույքը ջարդելու արարողությունը դիտում են վերածննդի հավատալիքների համատեքստում: Կարելի է ենթադրել, որ հուղարկավորման ծեսում գույքը ջարդելու սովորության հիմքում ընկած է այն պատկերացումը, որ ամբողջականությունը կորցնելուց հետո միայն այնկողմնային աշխարհում իրերը կարող են ծառայել իրենց նպատակին*[43]*: Իսկ խեցաբեկորների տեղավորումը ննջեցյալի գլխի տակ, քարե «բարձի» փոխարեն, կարող է հուշել, որ դրանց վերագրվել է նաև չարխափան զորություն:*

Իրերը ջարդելու ծիսակատարությունը քննվել է նաև ազգագրական ու բանագիտական ուսումնասիրություններում: Կարծիք է հայտնվել, որ թաղման ժամանակ առարկաները ջարդելու սովորությունը պահպանվել է մահվան դատապարտվածի գլխավերևում սուսեր կամ սուր կոտրելու արարողությունում [44]*: Մեկ այլ դիտարկմամբ՝ Զանգեզուրի հայերը կոտրում էին այն ամանները, որոնցով ջուր էին լցնում ննջեցյալի վրա, երբ լողացնում էին նրան* [45]*: Օսեթիայում, ձիու գոհաբերության արձագանքը ներառող սովորությամբ, ձիուն գերեզմանի մոտ էին բերում ու նրա սմբակին մի թաս խփելով՝ ջարդում էին այն, և բեկորները գերեզման դնում* [46]*: Հուղարկավորման ծեսում գույքը ջարդելու արարողակարգն ազգագրական աշխատություններում մեկնաբանվում է որպես միջոց՝ ուղղված ողջերի և մեռածների միջև բոլոր տեսակի նյութական կապերի խզմանը: Այն բացատրվում է մինչև դիակի թաղումը հանգուցյալի հոգու վերադարձի մասին պատկերացումներով և տեղ գտնում այդ վերադարձն արգելելու միջոցառումների համակարգում*[47]*: Հայերը, ընդհանրապես, սովորություն ունեին ման կոտրել ճանապարհ գնացող այն մարդու հետևից, ում ետ վերադառնալն իրենց ցանկալի չէր* [48]*: Ափսե ջարդելու արարողությունը հայտնի է նաև հարսանեկան*

---

[41] Э. Ц е р е н. *Նշվ. աշխ., էջ 364, 385:*

[42] Г. Ф. Н и к и т и н а. Погребальный обряд культур полей погребений Средней Европы в I тысячелетии до н. э.–первой половине I тысячелетия н. э.– В кн.: Погребальный обряд племен Северной и Средней Европы в I тысячелетии до н. э.–I тысячелетии н. э. М., 1974, с. 60.

[43] *Գ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան № 5 դամբարանը, էջ 168, ն ո ւ յ ն ի՝ Աշտարակի Խոջաբաղերի ուշբրոնզեդարյան դամբարանները.– ՊԲՀ, 1997, № 2, էջ 256-257:*

[44] В. Я. П р о п п. Исторические корни волшебной сказки. Л., 1986, с. 349.

[45] *Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 209:*

[46] Е. Е. К у з ь м и н а. Распространение коневодства и культа коня у ираноязычных племен Средней Азии и других народов Старого Света.– Средняя Азия в древности и средневековье. М., 1977, с. 43.

[47] З. В. Х а р а т я н. Культовые мотивы семейных обычаев и обрядов у армян.– Армянская этнография и фольклор. Материалы и исследования, вып. 17. Ереван, 1989, с. 36; А. К. Б а й б у р и н, Г. А. Л е в и н т о н. *Նշվ. աշխ., էջ 71-72:*

[48] *Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. Մանանա, Կ.Պոլիս, 1876, էջ 107:*

ծեսում, որտեղ այն համարվում է չարխափան միջոց[49]: Ավելորդ չէ հիշել, որ խեթերը ոտքերով աման ջարդելը համարում էին հարազատների հետ գժտությունը խափանող ծիսական հնարք[50]: Վ. Յա. Պրոպպի կարծիքով, գույքի ջարդումը, ընդհանուր առմամբ, խորհրդանշում էր անցումը մի վիճակից մյուսին[51]:

Գույքը դամբարանում զետեղելու որոշ առանձնահատկություններ

Ինչպես բազմիցս հիշատակվել է, թաղման ծեսի արարողությունները մանրամասն կանոնակարգված էին: Յուրաքանչյուր առարկա ոչ միայն ուներ զուտ իրեն հատուկ դերն ու նշանակությունը, այլև՝ իր որոշակի տեղը դամբարանում: Մի շարք իրեր դրվում էին ննջեցյալի գլխամասում, առարկաների մեկ այլ խումբ՝ ոտքերի մոտ, գույքի այլ մասը դրվում էր դեմքի առջև, մեջքի կողմում, դամբանասրահի անկյուններում կամ այլ հատվածներում: Կան դեպքեր, երբ ուշբրոնզեդարյան դամբարաններում ուղեցող գույքը զետեղվել է դամբանասրահից դուրս՝ ծածկասալերի վրա, թաղման խցի շրջակայքում՝ դամբանաթմբի ներքո[52], դրսի կողմից կրոմլեխին կից[53], կրոմլեխի քարերի տակ[54] և այլուր: Քանի որ այս հոդվածի սահմաններում հնարավոր չէ անդրադառնալ գույքը դամբարանում տեղադրելու բոլոր յուրահատկություններին, ստորև կխոսենք միայն դրանցից երկուսի մասին, որոնց վերաբերյալ նկատվում են որոշակի օրինաչափություններ:

ա) Ծիսական առարկաներ զետեղելը ննջեցյալի գլխի մոտ: *Ուշբրոնզեդարյան մի շարք դամբարաններում դիտվել է հանգուցյալի գլխակողմում ծիսական որոշ առարկաներ տեղադրելու սովորությունը: Այսպես՝ Արթիկի դամբանադաշտի թաղման խցերում մետաղյա առարկաները, սովորաբար, հայտնաբերվել են կմախքի գանգի մոտ[55]: Սասունիկի որոշ դամբարաններում բրոնզե դաշույները տեղավորվել են հանգուցյալի գլխակողմում[56]: Խաչբուլաղի դամբանաբլուրնե-*

---

[49] *Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 197, Գ. Դ. Ա ս ա տ ր յ ա ն. Պատմական Քանաքեռը և քանաքեռցիները, Երևան, 1990, էջ 87: Դիտված է նաև հարսանիքի ժամանակ փայտե ձող կոտրելու ծիսակատարությունը. տե՛ս* В. Я. Пропп. *Նշվ. աշխ., էջ 349:*

[50] Луна, упавшая с неба. Пер. с древнемалоазиатских языков, вступ. статья и коммент. Вяч. Вс. Иванова. М., 1977, 226.

[51] В. Я. П р о п п. *Նշվ. աշխ., էջ 349:*

[52] *Գ. Ե. Ա ր ե շ յ ա ն. նշվ. աշխ., էջ 3:*

[53] *Պ. Ս. Ա վ ե տ ի ս յ ա ն. Դամբարանների պեղումներ Թալինի շրջանում.– ԴՀԱԱ, 1987, էջ 24: Հ. Ե. Ս ի մ ո ն յ ա ն. Պեղումներ Վերին նավերում.– ԴՀԱԱ, 1989, էջ 11,* A. P i l i p o s y a n, R. M k r t c h y a n, G. T u m a n y a n, N. P a r m e g i a n i, R. B i s c i o n e. Armenian-Italian Archaeological Expedition Field Season 2003.– Studi Micenei ed Egeo-Anatolici, vol. XLV. Roma, 2003, pp. 318–319, fig. 4, $_{1\text{-}2}$.

[54] Г. Ф. Д ж а ф а р о в. Исследования в бассейне Инджичая.– Археологические открытия (далее–АО) 1981 года. М., 1983, с. 421; *Գ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Արուճի № 4 դամբանաբլուրը.– «Խալդյան զորությամբ…». հոդվածների ժողովածու նվիրված Բորիս Պիոտրովսկու 100-ամյակին, Երևան, 2010, էջ 111:*

[55] Т. С. Х а ч а т р я н. *Նշվ. աշխ., էջ 141:*

[56] *Պեղումները՝ Ն. Ենգիբարյանի և տողերիս հեղինակի:*

րից մեկում ննջեցյալի գլխի կողմում դրված է եղել վանակատե նետասլաք[57]: Այս ցանկը, անշուշտ, հնարավոր է անհամեմատ ընդարձակել մի ստվար խումբ մետաղյա առարկաների հաշվին, որոնք հանդես են գալիս գլխազարդերի տեսքով: Ուշբրոնզեդարյան դամբարաններում հայտնաբերվել են մեծ թվով ճակատակալ-վարսակալներ, ապարոշներ, թռչնակերպ-կենդանակերպ և ուրիշ ձևերի կախիկներ ու բոժոժներ, գալարազարդ միջնորմով հերակալներ ու քունքազարդեր, շքասեղներ, ականջօղեր և այլ տիպի մետաղյա զարդեր, որոնք, բնականաբար, գտնվել են գլխի շրջանում: Կան նաև այլ բնույթի առարկաներ, որոնք գործառնական առումով չեն առնչվում գլխին, այնուամենայնիվ, դամբարաններում սովորաբար տեղադրված են լինում ննջեցյալների գլխավերևում: Դրանք վանակատե և կայծքարե միջուկներն են, շեղբերը, առանձին խոշոր ծլեփները[58]: Օրինակ՝ դիաթաղմամբ ամփոփված ննջեցյալի գլխակողմում վանակատի ծլեփ է զետեղված եղել Արուճի դամբանադաշտի № 5[59] և Լճաշեն 2 դամբանադաշտի № 84 դամբարաններում:

Հիշյալ սովորության արմատները հասնում են մուստյերյան դարաշրջան, երբ ննջեցյալի գլխի տակ կամ շուրջը դրվում էին կայծքարի բեկորներ [60]: Հյուսիսարևելյան Հայաստանում այն հավաստված է պղնձեքարի և հետագա դարաշրջանների թաղումներում[61]: Կայծքարին և վանակատին վերագրվում էր վնասաբեր ազդեցությունները վանող հատկություն: Ժողովրդական բառ ու բանում վանակատն անվանվում է «սատանի եղունգ» կամ «գայլախազ սև քար»[62]: Հանգուցյալի գլխին մոտիկ մետաղյա իրեր զետեղելու ավանդությունը նկատվում է ինչպես կուր-արաքսյան մշակույթի դամբարաններում[63], այնպես էլ ավելի ուշ շրջանի թաղումներում: Այս արարողակարգը ևս, ամենայն հավանականությամբ, «չարխափան» նպատակ է հետապնդել, քանի որ հին հավատալիքներով չար ոգիները խուսափում էին մետաղից[64]: Իսկ թվարկված իրերը հատկապես դրվում էին հանգուցյալի գլխի մոտ, հավանաբար, այն պատճառով, որ վերջինս համարվում էր հոգու զետեղարաններից մեկը[65], ուստի կարիք էր զգում առանձնահատուկ պահպանության: Մահացածի հոգու և մարմնի ծիսական մաքրությունն ապահովելը թաղման ծեսը կատարողների հիմնական մտահոգություններից էր:

---

[57] Г. П. К е с а м а н л и. Хачбулагский курган с массовым захоронением.– Материальная культура Азербайджана, т. VIII. Баку, 1976, с. 55.

[58] *Հիշյալ առարկաները, երբեմն, կարող են զետեղված լինել նաև կմախքի այլ մասերի մոտ:*

[59] *Գ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան № 5 դամբարանը, էջ 161:*

[60] С. К. Д и к ш и т. Введение в археологию. М., 1960, с. 162.

[61] О. А. А б и б у л л а е в. *Նշվ. աշխ., էջ 39-50, Օ. Ս. Խ ն կ ի կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 126:*

[62] *Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. նշվ. աշխ., էջ 435, Ե. Դ ո ւ ր յ ա ն. Հայոց հին կրոնը կամ հայկական դիցաբանություն, Երուսաղեմ, 1933, էջ 148:*

[63] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն. Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 38-42:*

[64] *Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 307:* А. Р. И с р а е л я н. Колокольчики и бубенцы в армянских народных верованиях.– ИФЖ, 1993, № 1–2, с. 148–149.

[65] *Ս տ. Լ ի ս ի ց յ ա ն. նշվ. աշխ., էջ 291:*

բ) Կենդանիների զոհաբերությանն առնչվող իրերի տեղադրելը զոհի մարմնի վրա

Ուշբրոնզեդարյան դամբարաններում բրոնզե դաշույնները, վանակատե և կայծքարե նետասլաքները, հարդարված ու առանց հարդարման ծլեփները հաճախ դրվում էին զոհաբերված կենդանիների կամ սրանց որևէ մասի մոտ, իսկ որոշ դեպքերում՝ հենց մարմնի վրա, ընդգծելով տվյալ իրի կապը զոհի հետ: Նման փաստեր արձանագրվել են Վերին նավեր[66], Արուճի [67] դամբարանադաշտերում, Շամիրամի մեծ դամբ անաբլուրներում [68] և այլուր: Հաճախ, հիշյալ իրերն առնչված լինելով կենդանու զոհաբերությանը, միաժամանակ գետեղված են նաև ննջեցյալի գլխավերևում: Խոջաբաղերի № 2 դամբանի թաղման խցում զոհաբերված կենդանիների ոսկորների հետ գտնվել է վանակատի երկու ծլեփ (մեկը՝ հարդարված)[69]: Քեթիի № 21 դամբարանում վանակատի ծլեփներ են հայտնաբերվել մանր եղջերավոր կենդանու կմախքի վրայից, ինչպես նաև այն խեցանոթների միջից, որոնցում եղել են կենդանիների ոսկորներ [70]: Լճաշեն 2 դամբանադաշտի որոշ թաղումներում կենդանու ոսկորներ կամ զանգ պարունակող քերեղանների մեջ դրված են եղել նաև նետասլաքներ: Հիշյալ սովորությունը բնորոշ է ինչպես քննարկվող դարաշրջանին հաջորդող, այնպես էլ նախորդող մշակույթներին[71]: Այն գոյություն ուներ նաև ուշբրոնզեդարյան Վրաստանում[72]:

Ուսումնասիրողներն անդրադարձել են այս արարողության ծիսական նշանակությանը: Զ. Գ. Շատբերաշվիլին բերել է վանակատե «դանակի» օգնությամբ ոչխարները ծիսականորեն մորթելու ազգագրական օրինակներ[73], իսկ Լ. Ա. Պետրոսյանի կարծիքով, այդ առարկաները խորհրդանշում են «մսի օգտագործումը հանդերձյալ աշխարհում»[74]: Ակնհայտ է, որ կենդանիների զոհաբերության ժամանակ վանակատե գործիքների կիրառումն իր մեջ պարունակում է այդ արարողության վաղեմի արձագանքները, իսկ զոհի կմախքի վրա կամ վերջինիս մոտ նաև մետաղյա զենքերի ու գործիքների հայտնաբերումը վկայում է դրանց համարժեք նշանակությունը վանակատե գործիքներին: Վերջիններս, մետաղյա

---

[66] *Հ. Ե. Սիմոնյան. նշվ. աշխ., էջ 12:*

[67] *Գ. Թումանյան. Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան № 5 դամբարանը, էջ 161-162, աղ. I:*

[68] Г. Е. Арешян. Раскопки больших шамирамских курганов.– АО 1981 года. М., 1983, с. 425–426.

[69] *Գ. Ս. Թումանյան. Աշտարակի Խոջաբաղերի ուշբրոնզեդարյան դամբարանները.– ՊԲՀ, 1997, № 2, էջ 254:*

[70] Л. А. Петросян. *Նշվ. աշխ., էջ 56:*

[71] *Այս առումով արժե հիշատակել Արուճի № 4 դամբանաբլրի ստորին թաղումը (մ. թ. ա. XVI դարի կես), որտեղ զոհաբերված ձիու և երկու եզան կմախքների վրա հայտնաբերվել է վանակատե մեկական արտեֆակտ: Դրանցից մեկն ավելի քան 9 սմ երկարությամբ խոշոր ծլեփ է, որը հարմար է ձախ ձեռքով բռնելու համար և կարող էր ծառայել որպես գործիք՝ կենդանին զոհաբերելիս, իսկ մյուսը՝ բնական բռնակով փոքր «դանակ». տե՛ս Գ. Թումանյան. Արուճի № 4 դամբանաբլուրը, էջ 111:*

[72] К. Н. Пицхелаури. *Նշվ. աշխ., էջ 29-30:*

[73] *Նույն տեղում:*

[74] *Լ. Պետրոսյան. Հետախուզական պեղումներ Քեթիում (1970 թ.).– ՊԲՀ, 1973, № 4, էջ 216:*

իրերի առկայության պայմաններում, կարող էին օգտագործվել զոհաբերվող կենդանու մարմնի որևէ մասի վրա նախնական նշան անելու համար[75], սովորություն, որի արձագանքները հասնում են մեր օրերը: Այս, ինչպես և հուղարկավորման ծեսին առնչվող այլ առարկաների զետեղումը դամբարաններում օրինաչափություն էր, որը բխում էր ծիսակարգի պահանջներից: Ըստ երևույթին, կարևորություն է տրվել նաև նշված իրերի վանողական՝ «չարխափան», նշանակությանը: Դրա անուղղակի վկայությունն է վանակատի ծլեփների, նետասլաքների առկայությունը ոչ միայն զոհի կմախքի վրա, այլև՝ խեցանոթների մեջ, սննդի մաս կազմող ոսկորների հետ: Այս վերջին իրավիճակից կարելի է եզրակացնել, որ վանակատե զենքերն ու գործիքներն օգտագործվել են նաև պահպանական նպատակներով, այսինքն՝ կոչված են եղել ապահովելու զոհաբերության ծիսական մաքրությունը:

Թաղման ծեսի համակարգում ուղեկցող գույքը հնագետների կողմից մինչ այժմ ամենամեծ ուշադրության արժանացած տարրն է: Այն, սովորաբար, մանրամասն նկարագրվում կամ գոնե թվարկվում է պեղումների վերաբերյալ ամենափոքր հաղորդագրությունում անգամ: Բայց գույքի հանդեպ նման, մեր կարծիքով, միանգամայն արդարացի, հետաքրքրության պայմաններում, հաճախ, հնարավոր չի լինում վերականգնել այն նախնական իրադրությունը, որում գտնվել են դամբարան դրված իրերը: Պեղումներով հայտնաբերված իրերը, երբեմն, այնքան արժեքավոր են որպես պատմական սկզբնաղբյուր կամ արվեստի ստեղծագործություն, որ դժվար է հրաժարվել միայն դրանց հետազոտությամբ զբաղվելու գայթակղությունից: Այնուամենայնիվ, այս հոդվածում մենք հեռու մնացինք հիշյալ հրապուրանքից, փորձելով պատասխանել ոչ թե «ի՞նչ իրեր են զետեղվել դամբարաններում» կամ «ինչպիսի՞ն են այդ իրերը» հարցերին, այլ՝ պարզաբանել հուղարկավորման ծեսին բնորոշ ուրիշ կարգի խնդիրներ:

ЗАМЕЧАНИЯ О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ОБ ИНВЕНТАРЕ ПОЗДНЕБРОНЗОВЫХ ПОГРЕБЕНИЙ АРМЕНИИ

ГАРЕГИН ТУМАНЯН

Резюме

Погребальный инвентарь состоит из артефактов, связанных с жертвоприношениями в системе обряда, из личных вещей покойника, из приношений для усопшего и других ритуальных предметов. В условиях разнообразности и многочисленности находок практически невозможно в рамках одной статьи рассмотреть весь комплекс погребального инвентаря. Интерес представляют а) соотношение определенных групп предметов к полу и возрасту покойников; б) дополнительное изменение инвентаря перед помещением в

[75] *Օրինակ՝ կտրվածք՝ականջին:*

могилу, в частности – разбивание вещей; в) размещение некоторых предметов по отношению к трупу или жертве и т. д. Так, погребения мужчин обычно сопровождались оружием и орудиями труда, а для погребений женщин характерны керамические сосуды и предметы украшений. Перед помещением в могилу орнаменты сосудов наполнялись или покрывались красками, на поверхности сосудов изображались свастики, волнистые линии и другие символические знаки, а также просверливались отверстия. У головы погребенного клались обсидиановые нуклеусы и отщепы, металлические предметы, в частности – оружие, а на туши жертвенных животных – наконечники стрел и бронзовые кинжалы. С привлечением этнографических и фольклорных данных можно сделать вывод, что целью погребального обряда в позднебронзовой Армении являлось возрождение погребенного.

REMARKS ON SOME ISSUES RELATED TO THE GOODS OF LATE BRONZE AGE BURIALS OF ARMENIA

GAREGIN TOUMANYAN

S u m m a r y

Burial goods consist of artifacts related to sacrifices made within the system of the rite, personal belongings of the deceased, gifts offered to the latter, and other ritual items. It is practically impossible discussing the whole range of burial inventory in the scope of an article, given the large number and diversity of the finds. The following are remarkable: correlating some item groupings with age and gender of the deceased people; additional changes made to the items before placing those in the tombs, specifically, breaking the items; positioning of some items in relation to the corpse or sacrifice, etc. In particular, burials of men were usually accompanied with weapons and tools, while ceramic vessels and jewelry were characteristic for burials of women. Before placing vessels in the tomb, their ornaments were filled or covered with paints, swastikas, wavy lines, and other symbolic characters were depicted on their surfaces, and holes were drilled. Obsidian nucleuses and chips, metallic items and, particularly, weapons were placed at the head of buried, while arrowheads and bronze daggers – on the carcasses of sacrificed animals. With involvement of ethnographical and folk-lore data, a conclusion is made that revival of buried was the aim of funerary rites in Late Bronze Age Armenia.